



ՔԱՐՈՋ

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, ամէն»:

«Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն» (Մատթեոս Ե 7):

Սիրելի հավատացյալներ,

Սուրբ Մատթեոսի Ավետարանի չորրորդ և հինգերորդ գլուխները՝ «Լեռան քարոզը», մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի քարոզության ամենամոծգին օրինակներն են և կրնա սեպւիլի, իր առաքելության գագաթներն են: Վերոհիշյալ դեպքը տեղի կունենա Քրիստոսի քարոզության առաջին ամիսներուն և Սուրբ Մատթեոսի Ավետարանն զատ կհիշատակվի Սուրբ Մարկոսի և Սուրբ Ղուկասի Ավետարաններուն մեջ:

Հիսուսի յուրաքանչյուր նախադասություն կսկսի «Երանի» բառով: Այս իսկ պատճառով, շատ հաճախ այս քարոզը ճանչցված է նաև որպէս «Ճշմարիտ երանություններու» քարոզ: Ան բաղկացած է ինն տարբեր մասերէ: Այսօր ավելի մանրամասն պիտի անդրադառնանք յոթներորդին՝ «Երանի ողորմածներուն» վասն զի անոնք ողորմություն պիտի գտնեն»:

Գուցէ 20-րդ դարի ավարտին ապրող մարդու համար քիչ մը խորթ թվի այդ բառը՝ Ողորմություն, որովհետև մեր այսօրվա կյանքի պայմաններու մեջ և քաղաքական մտքի ու մտածողության վարճացման հետևանքով՝ մարդ դժվար թէ ընդունի «Ողորմության» սկզբունքը: 1985-ին ապրող մարդուն համար

բոլորովին բացասական իմաստ կրնա ունենալ այդ բառը, սակայն, ավելի քան երբեք, Ողորմությունը կմնա անհրաժեշտություն մը մեր կյանքին մեջ ու մեր սիրտերուն մեջ:

Հին ժամանակներուն Ողորմության պտուղը կհամարվեր այն, ինչ որ 20-րդ դարի մարդը կնկատէ արդար: Եվ այսպէս մեր օրերու ամենատվորական երևոյթները կը դառնային Ողորմության առարկայական արժեքներ, որով իրենց ժամանակներու բարեպաշտ ու վեհանձն նկատվող մարդիկ կարժանանային «Ողորմած» տիտղոսին, ինչպէս օրինակ Բագրատունիաց շրջանի Հայոց թագավոր Աշոտ Ողորմածը:

Սակայն «առատապէս բաշխված» այդ ողորմության չեն վերաբերիր Քրիստոսի խոսքերը: Ողորմության այդ նշանները, որ մարդիկ կրնան ցույց տալ կամ մերժել, ուրիշ են. զուտ մարդկային է այդ ողորմությունը: Ան սիրո և գութի, անհրաժեշտ, բնական ու հիմնական ցուցաբերումն է, որ պետք է տիրէ մարդկային մեր ամենօրյա հարաբերություններուն մեջ:

Ուրեմն ի՞նչ ողորմություն կխոստանա մեզի Հիսուս:

Ողորմությունը, զոր մեզի կխոստանա Հիսուս, ավելի մեծ է, քան մեր մարդկային ողորմությունը, այն Աստվածային Ողորմությունն է՝ թագավորությունը: Այդ ողորմությունը, զոր մենք կխնդրենք Արարիչէն, երբ ս. պատարագի ընթացքին Վ. սեղանի առջև ծըն-

րադիր «Տեր ողորմեա» կերգենք: «Տեր ողորմեա»-ն նախապես գոյություն չունեն մեր սրբապան պատարագի մեջ, այլ այն շատ սիրված ըլլալով մեր ժողովուրդին մուտք գործեց ս. պատարագի երգեցողության մեջ՝ այն սարսափի ժամանակներուն, երբ մեր ժողովուրդը ուրիշ ազգերու ճնշումին տակ, կակնկալեր Աստվածային ողորմություն, որովհետև «Երանի ազգի որոյ Տեր Աստուած Յակոբայ օգնական է նմա և յոյս նորա ի Տեր Աստուած է» կըսէ սաղմոսերգուն (Սաղմոս ձևԵ 5):

Եվ շատ բնականորեն մեր առավոտյան անմիջական գործերեն մեկը կըլլա խնդրել Աստուծո Ողորմությունը: Գիշերային ժամի «Տեր Վի բապում»-ի առեն մեր բոլոր վախերը, տանջանքներն ու մտահոգությունները հայտնելէ վերջ, պորացած ու կապտուրված՝ Տիրոջ օգնության կղիմենք «Ողորմութեամբ քով սատակեա պջնամիս իմ, եւ կորո պամենայն նեղիչս անձին իմոյ, Վի ես ծառայ Քո եմ» (Սաղմոս ձևԲ 12):

Այդ պահուն և ամբողջ օրվան ընթացքին Աստուծո ողորմությունը կդառնա ապահով վահան մը, որ մեզի կպաշտպանէ բոլոր փորձություններեն:

Բայց Աստվածային ողորմությանն արժանանալու համար մենք պետք է գիտնանք՝ մեր կարգին ողորմած ըլլալ խոնարհաբար, առանց ավելորդ աղմուկի: «Ձգույշ եղէք, որ ձեր ողորմությունը մարդոց առջև չընէք՝ ատոնց երևալու համար, եթե ոչ վարձք չէք առնէր ձեր Հորմե, որ երկինքն է» (Մատթ. Ե 1):

Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի այս վերջին խոսքը ձևով մը կարծես կուգա ամբողջացնելու մեր այսօրվա խորհրդածությունը: Քրիստոս մեզ կպգուշացնէ, որ իսկական հավատացյալը պիտի ըլլա բարեսեր և անշահախնդիր, և որովհետև ողորմած են, ողորմություն պիտի գտնեն:

Արդ, մեր կյանքի բոլոր պահերուն գիտնանք ըլլալ ուշադիր՝ դիմացինը չվիրավորելու համար, օգնենք իրար՝ առանց վգացնելու և առանց հետին նպատակներու ու հաշիվներու, անկեղծորեն ու հարգանքով, որովհետև 1985 թվականի մարդուն համար **Ողորմություն** պետք է նշանակէ նաև հարգանք, մյուսին արժանապատվության խոր գիտակցություն: Այս քայլերուն դիմելով է, որ մենք կրնանք Աստվածային բարձր ու աննման Ողորմության արժանանալ:

Այս գիտակցությամբ կատարելապես Վինված բոլորս միաբերան կրնանք արտասանել Սիմեոն ծերունիի հետ. «Արդ արձակեա Վառայս Քո, Տեր, ըստ բանի Քում ի խաղաղութիւն, Վի տեսին աչք իմ Վփրկութիւն Քո, Վոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովորոց» (Ժամագիրք):

Թող մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի ջնորհը, սերը և ողորմությունը առատապես ու հավետ ըլլան մեր բոլորին վրա, ամեն:

ՍԱՀԱԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Հոգևոր ձեմարանի ուսանող

